

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՊԵՄ
ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆ**

Ա. Ղամբարյան

ՀՀ գլխավոր դատախազության
ԳՈՒԿ-ի քրեական դատավարության,
դատախազական գործունեության և
կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ. Թադևոսյան

ՀՀ գլխավոր դատախազության
դատարաններում քրեական գործերով
մեղադրանքի պաշտպանության
վարչության դատախազ,
իրավ. գիտ. թեկնածու

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում ամրագրված է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի կարգավիճակը (բացի սահմանադրական արդարադատության հարցերից): Իրավակիրառ պրակտիկայում և տեսության մեջ նշվում է, զանո որ ՀՀ վճռաբեկ դատարանը բարձրագույն դատական ատյան է, ուստի քաղաքացիների՝ ՀՀ սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված դիմումները կարող են ընդունելի համարվել, եթե նրանք սպառել են ՀՀ վճռաբեկ դատարանի պաշտպանության միջոցը: Սույն հոդվածում խնդիր ունենք վերլուծել, թե քաղաքացին ՀՀ սահմանադրական դատարանում կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում իրենց իրավունքների պաշտպանության նպատակով, արդյոք պարտավոր են սպառել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի պաշտպանության միջոցը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69—րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: ՀՀ սահմանադրական դատարան դիմելու պայմաններից է դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը: ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար ՀՀ վճռաբեկ դատարանի պաշտպանության միջոցի սպառման հարցի քննարկման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում *Բելեշն և այլոք ընդդեմ Չեխիայի գործը, որով Եվրոպական դատարանն* անդրադարձել է Չեխիայի սահմանադրական դատարան դիմելու համար Գերագույն դատարանի իրավական պաշտպանության միջոցի սպառման խնդրին: Սույն գործով Չեխիայի Սահմանադրական դատարանը, հղում կատարելով Քաղաքացիական դատավարական օրենսգրքի 239-2 հոդվածին, մերժել է բավարարել դիմողի բողոքն այն հիմքով, որ նրանք չեն սպառել օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցները, այն է՝ իրավունքի հարցով բողոք չեն ներկայացրել: Իրավունքի հարցով դիմողի բողոքի ընդունումը Քաղ. դատ. օրենսգրքի 239-2-րդ հոդվածի համապատասխան՝ բացառապես կախված էր Չեխիայի Սահմանադրական դատարանի դիրքորոշումից, որը պետք է որոշեր, թե արդյոք վիճարկվող որոշումը «իրավական տեսակետից հույժ կարևոր է»: Ոչ հայցվորները, ոչ իրենց փաստաբանը չէին կարող գնահատել Գերագույն դատարանի կողմից իրենց բողոքի ընդունելության հնարավորությունը, հատկապես,

երբ այն մերժվել էր երկրորդ ասյանի դատարանի կողմից: Եթե դիմողները բողոք ներկայացնեին իրավունքի հարցով և այն ճանաչվեր անընդունելի, ապա այդ դեպքում Սահմանադրական դատարան ներկայացված դիմողի բողոքը կարող էր համարվել անընդունելի՝ ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ: Սույն գործով Կառավարությունը նշել է, որ դիմողը կարող էր միաժամանակ գանգատ ներկայացնել և՛ Գերագույն դատարան, և՛ Սահմանադրական դատարանը: Եվրոպական դատարանը չընդունեց Կառավարության մոտեցումը՝ նշելով, որ երկու տարբեր դատական մարմիններ միաժամանակյա բողոքի ներկայացումն իրավական պաշտպանության պատահական միջոց է, որն ամրագրված չէ օրենսդրոթեև և չի ապահովում իրավական որոշակիության սկզբունքը: Դիմողներին առաջադրվող՝ Սահմանադրական դատարան և միաժամանակ նույն հիմքով իրավունքի հարցով բողոք ներկայացնելու պահանջը խախտում է իրավական որոշակիության սկզբունքը: Ավելին, իրականում, հազիվ թե անհատ անձանց հայտնի լինի միաժամանակ երկու դատական մարմին հայց ներկայացնելու հնարավորության մասին: «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 72-2-րդ և 75-1-րդ հոդվածներով նախատեսված «իրավական պաշտպանության բոլոր միջոցների» սպառման պահանջը խախտում է հայցվորի՝ բողոք ներկայացնելու իրավունքի էությունը, քանի որ հայցվորի վրա դրվում է անհամաչափ պարտականություն, որը խախտում է Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու կարգը սահմանող դատավարական նորմերի պահպանման իրավաչափ նպատակի և Սահմանադրական դատարանում արդարադատության մատչելիության իրավունքի միջև արդարացի հավասարակշռումը: Քանի որ Չեխիայի օրենսդրության համապատասխան՝ իրավունքի հարցով բողոքը իրավական պաշտպանության արտակարգ միջոց է, որը մատչելի չէ, հատկապես, երբ բողոքի ընդունելության հարցը որոշվում է Գերագույն դատարանի կողմից, ուստի սույն գործով այն չի կարող դիտարկվել որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Այս տեսանկյունից դիմողներին չի կարելի մեղադրել նրանում, որ իրենք չեն սպառել տվյալ միջոցը: Սահմանադրական դատարանի որոշումը գրկել է դիմողներին արդարադատության մատչելիության իրավունքից, և խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործի արդարացի քննության իրավունքը **(Բելեշև և այլք ընդդեմ Չեխիայի գործով Եվրոպական դատարանի 12.11.2002. վճիռ)¹**:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69—րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ: Իրավակիրառ պրակտիկայում վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե ո՞ր դատական ակտը պետք է համարել վերջնական ակտ, որով կիրառվում է օրենքի վիճարկվող դրույթը: Առանձին դեպքերում որպես վերջնական դատական ակտ է դիտվում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը: Կարծում ենք նման մոտեցումը հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ՝

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի առաջին մասում նշվում է գործը լուծող վերջնական դատական ակտի մասին, մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը գործն լուծող դատական ակտ չէ:

¹ Путьеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. М.: 2004. С. 157.

2. ՀՀ Սահմանադրությունը պահանջում է, որպեսզի վերջնական դատական ակտով կիրառված լինի օրենքի վիճարկվող դրույթը, մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կիրառվում են ՀՀ քր. դատ. օր-ի 414.1-րդ և 414.2-րդ հոդվածների համապատասխան դրույթները:

Կարծում ենք ՀՀ սահմանադրական դատարան դիմելիս որպես վերջնական դատական ակտ պետք է դիտել ՀՀ վերաքննիչ դատարանի և ՀՀ տնտեսական դատարանի ակտերը²:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմին է համարվում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է գործն ընդունել վարույթ, եթե սպառվել են իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

Եվրոպական դատարանը մեկնաբանել է «իրավական պաշտպանության միջոցների սպառման» պայմանը: Դատարանի նախադեպային իրավունքով սահմանվել է, որ Եվրոպական դատարան դիմելու համար չի պահանջվում որպեսզի սպառվեն ոչ արդյունավետ պաշտպանության միջոցները: Եվրոպական դատարանը նշել է, որ իրավական պաշտպանության միջոցները պետք է հուսալի լինեն ոչ թե տեսականորեն, այլ գործնականում: Դրանք պետք է լինեն արդյունավետ և մատչելի: Իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը պայմանավորված է դիմողի համար այդ միջոցների մատչելիության հնարավորությունից, ինչպես նաև իրավական պաշտպանության միջոցների սպառման կանխատեսելիությունից (*Ակդիվարն ընդդեմ Թուրքիայի գործող Եվրոպական դատարանի 16.09.1996թ. վճիռ*): Եվրոպական դատարանը նաև նշել է. «Իրավական պաշտպանության միջոցները սպառելու սկզբունքը բացարձակ չէ և չի կարող կիրառվել մեխանիկորեն: Իրավական պաշտպանության միջոցները սպառելու հարցը լուծելիս՝ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների առանձնահատկությունները: Սա նշանակում է, որ պետք է իրատեսականորեն գնահատել, ոչ միայն Անդամ պետության իրավական համակարգում իրավական պաշտպանության միջոցների գոյության փաստը, այլ նաև իրավական և քաղաքական իրավիճակը, որի պայմաններում գործում է այդ պաշտպանության միջոցը, ինչպես նաև դիմողի վիճակը» (*Ակդիվարն ընդդեմ Թուրքիայի գործող Եվրոպական դատարանի 16.09.1996թ. վճիռ*):

Իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը հաճախ կախված է այն հանգամանքից, թե արդյոք իրավական պաշտպանության միջոցները դիսկրեցիոն բնույթի են, այսինքն՝ տվյալ ատյանում գործը քննելն արդյոք կախված է իրավասու պաշտոնատար անձի հայեցողությունից, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում նախատեսված հսկողական վարույթը: Նման պաշտպանության միջոցն առավելապես դիտվում է ոչ արդյունավետ պաշտպանության

²Ինչպես նշվեց, ՀՀ տնտեսական դատարանի վճիռները, ի տարբերություն ՀՀ վերաքննիչ դատարանի ակտերի, հրապարակման պահից օրինական ուժի մեջ չեն մտնում, ուստի կարծում ենք, եթե ՀՀ տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ չմտած վճիռները բողոքարկվում են ՀՀ վճռաբեկ դատարան և բողոքը վերադարձվում է, ապա որպես վերջնական դատական ակտ պետք է դիտել ՀՀ տնտեսական դատարանի վճիռը և ոչ թե ՀՀ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը:

միջոց *(Տումիլովիչն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 22.07.1999թ.-ի վճիռ)*: Անարդյունավետ կարող են համարվել այն պաշտպանության միջոցները, որոնք քննարկում են միայն իրավունքի հարցեր, իսկ գործն առնչվում է փաստերին³:

Բարձրացված հիմնական հարցին, այն է՝ քաղաքացին ՀՀ Սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան դիմելու համար արդյոք պարտավոր է սպառել ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական պաշտպանության միջոցը, պատասխանելու համար պետք է պարզել, թե արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանը քննում է միայն իրավունքի հարցեր, և ՀՀ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերն արդյոք բավարարում են իրավական որոշակիության սկզբունքի պահանջները:

Առաջին հարցադրման կապակցությամբ կարելի է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն, ընդհանուր առմամբ, քննում է միայն իրավունքի հարցեր (այս կապակցությամբ որոշակի մտահոգության տեղիք է տալիս այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու է պատճառաբանել վերաքննիչ դատարանի չպատճառաբանված, սակայն գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը: Եթե վճռաբեկ դատարանը փաստի հարցեր չի քննում, ապա ինչպե՞ս կարող է պարզել չպատճառաբանված դատական ակտով գործն ըստ էության ճիշտ է լուծվել, թե՞ ոչ: Եթե դատական ակտը պատճառաբանված չէ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու չէ նոր ապացույցներ ձեռք բերել կամ ուսումնասիրել, ապա կարելի է ենթադրել, որ նման դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը դատական ակտը պատճառաբանելու համար չի տիրապետում բավարար փաստական հանգամանքներին):

Իրավական որոշակիության սկզբունքը կոչված է ապահովելու, որպեսզի իրավահարաբերության մասնակիցների միջև վեճի լուծման ժամանակ իրավակիրառ մարմնի գործողությունները նույնպես կանխատեսելի լինեն: Այս սկզբունքը կոչված է ապահովելու հարաբերությունների կայունությունը: Արդարադատության մարմինները, խնդիր ունենալով ստեղծել արդարադատության կանխատեսելիությունը, գործում են իրավական որոշակիության սկզբունքի պայմաններում:

ՀՀ քր. դատ. օր-ի 414.2-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ 1) վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ 3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Արդյոք բողոքը վարույթ ընդունելու այս հիմքերը բավարարում են իրավական որոշակիության պահանջը: Այս հարցի կապակցությամբ ընդունելի պետք է համարել ՀՀ գլխավոր դատախազի՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» 28.12.2006թ.-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը. «Կարծում ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված վճռաբեկ բողոքների ընդունելության հիմքերը անորոշ են, ձևակերպված են ոչ հստակ, հնարավորություն են տալիս երկիմաստ և դիսկրեցիոն մեկնաբանությունների, ինչի հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերին չբավարարելու հիմքով

³ Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей. - М.: Под ред. М.Р. Воскобитовой. «Анахарсис», 2005, С. 39.

վերադարձնելիս խախտվում են դատական արդյունավետ պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքները և իրավական որոշակիության սկզբունքը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ՀՀ քր. դատ. օր.-ի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում ամրագրված հիմքերի անորոշությունը, ոչ հստակ ձևակերպումը ՀՀ վճռաբեկ դատարանին տալիս են անսահմանափակ, որևէ իրավաչափ նպատակ չհետապնդող հայեցողական լիազորություն՝ գնահատելու ՀՀ քր. դատ. օր.-ի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում ամրագրված հիմքերը: Օրինակ՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: «Օրենքի միատեսակ կիրառությունը» ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվում է երկու իմաստներով՝ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի իմաստով և ՀՀ քր. դատ. օր.-ի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում «օրենքի միատեսակ կիրառությունը» դիտարկվում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի հիմնական խնդիր (գործառույթ), քանի որ այն կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Մինչդեռ, ՀՀ քր. դատ. օր.-ի 414.2-րդ հոդվածի 1-ին մասում օրենքի միատեսակ կիրառությունը դիտվում է որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք: Այս առումով պետք է տարբերակել «օրենքի միատեսակ կիրառության ապահովումը» որպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող խնդիր և որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք: ՀՀ օրենսդիրը նենգափոխել է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում օգտագործվող «օրենքի միատեսակ կիրառություն» հասկացության սահմանադրական իմաստը և ՀՀ քր. դատ. օր.-ի 414.2-րդ հոդվածում այն դիտարկել է որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք:

Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Այս հիմքում օգտագործվող «ծանր հետևանք» ձևակերպումից անհասկանալի է այն, թե նյութական և դատավարական իրավունքի խախտումը ու՞մ համար է ծանր հետևանքներ առաջացնում՝ տուժողի, դատապարտյալի, թե պետության: Հաշվի առնելով, որ քրեական դատավարությունում լուծվում են քրեաիրավական հարաբերություններ և անձի նկատմամբ կիրառվում է պետական հարկադրանքի ամենախիստ միջոցը համարվող քրեական պատիժը, ուստի նյութական և դատավարական իրավունքի խախտման բոլոր տեսակի դրսևորումները կարող են առաջացնել ծանր հետևանքներ»:

Ելենով այն հանգանաքից, որ ՀՀ վճռաբեկ դատարանը քննում է միայն իրավունքի հարցեր, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու առանձին հիմքերի անորոշության պատճառով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցում ունի ընդարձակ հայեցողության հնարավորություն, ուստի կարելի է եզրակացնել, որ քաղաքացիները ՀՀ սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու կամ Եվրոպական դատարան դիմելու համար պարտավոր չեն սպառել ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական պաշտպանության միջոցը: